





ՅՈՒՇԱՐԱՐ ԺԱՄԱՑՈՅՑ

Այս նոր ժամացոյցը ամէն տեւ
սակէտով կատարեալ լինելէն զատ
(խարսխային շարժում , ամուր ,
սիրուն եւ ո՛ր եւ է պակասութենէ
զերծ , եւն .) իբր յուշատետր ծառայելու ալ յարմարցուած է . որովհետեւ ժամացոյցի տախտակին վրայ՝ մէն մի ժամու դիմաց՝ յատուկ տեղեր կան , օրուան մէն մի ժամուն կատակելիք գործերն նշանակելու համար . իսկ ժամացոյցին ետեւի կողմը երկու կափարիչներ գտնուելով , երկրորդ կափարիչը նոյնպէս յարմարցուած է աւելի երկար նօթեր ստանալու , օրինակ՝ շաբթուան կամ ամսուան մէջ կատարելիք գործերու համար : Գրուած բաները շատ դիւրութեամբ եւ շուտ կ'եղծուին : Ժամացոյցը խիստ տափարակ է եւ հազարամետր մեծութիւն ունի . կը պատրաստուի սեւ



ւացած պողպատէ եւ անիովիտ արծաթագոյն . է հետը կը գտնուի կապարագրիչ մը՝ շղթայով մը ժամացոյցին միացած : Ժամացոյցը , շղթան եւ կապարագրիչը միասին կը ծախուին ֆսան եւ ինչ (29) Փրանքի մաքսը գնողին վրայ , ճանապարհածախսը մեր վրայ :

Ստանալ փափագողները դիմելու են խմբագրութեանս , կանխիկ վճարմամբ :

ՄՏԱՑՈՒՄԾ ԳՐԳԵՐ

1) A. H. Sayce, «The language of Mitanni». 2) A. Meillet, «Varia». 3) M. Nalbandian. «Pensionnat oriental». 4) հ. Արսէն Ղազիկեան, «Օսսիան . — Քերթուածներ , Ա» . 5) Արշակ Մ. Ալթունեան , «Աղքատին պատիւը կամ Նախախնամութեան մատը» , հտ. Ա. եւ Բ. 6) Տօքթ. Ն. Տաղաւարեան , «Տիեզերք եւ իր կազմութիւնը» . թրգմ. Սահակ վ. Օտապաշեան :

Հրատարակուեցան եւ ղրկուեցան բաժանորդաց

«ԳԵՂՈՒՆԻ»

Գեղարուեստական թերթի 4 , 5 եւ 6րդ պրակները :
Բաժանորդագրութեան համար դիմել՝ Վենետիկ , ս. Ղազար :

ԴԵՌՔԵՆ ՎՃԱՐԱԾ

Հակառակ մեր կրկնակի դիմումներուն՝ կը գտնուին կարգ մը բաժանորդներ, որոնք իրենց պարտքը չեն վճարած դեռ եւ այդ ընթացքով դժուար կացութեան մատնած են խմբագրութիւնս։ Նորէն կրկնենք եթէ մենք մեր պարտքերն անկարող ըլլանք վճարել օտարազգի տպարանատէրի, թղթավաճառի եւ այլոց, ո՞վ է մեղաւորը.....

ԽՄԲ. «ԲԱՆԱՍԻՐ»Ի

Լոյս տեսաւ

«ՆՈՐ ԴՊՐՈՑ»,

Դասընթացք Նախակրթութեան

Բաժանորդագիրն 10 Պրակի 25 դրշ.

Դիմել առ Սմբատ Դաւթեան

Սիրֆէճի, Խօրասանճեան խան (Կ. Պօլիս)

ՏԻՏԱՆԻ ԱՐԵՒԵԼՔԸ

Թարգմ. անգլիերէնէ՝ ԽՈՍՐՈՎ

Գիրն է՝ 50 սանտիմ (ճանապարհածախսով՝ 60 ս.)

Դիմել խմբագրութեանս, կամ առ

Mr. A. Ardontz

43 Douglas Rd. — Maidstone (Angleterre).

Մարաղայի «Ա. Երիցեան Գրադ. - Ընթերցարան»ի

Վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Իշխ. Լուսինեանին, որ մի օրինակ «Բանասէր» նուիրած է նոյն Գրադարանին։ Մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ նաեւ բժշկադ. Ա. Բաբայեանին, իր նուիրած մեծաքանակ դրքերու համար։

Ամէն տեսակ նուէր պէտք է ուղարկել այս հասցէով.

Bibliothèque A. Eritzian

Maragha (Perse).

ԲԱՑՈՒԱԾ Է ԼՈՅՍԻ Բ. ՏԱՐԻՈՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոյ. 1, 1902էն սկսեալ կրկին ծաւալով պիտի հրատարակուի Լոյսը։ Իր նպատակը պիտի ըլլայ ժողովրդականացնել ժամանակիս կենսաբանական, առողջաբանական, հոգեբանական, ընկերաբանական եւ իմաստասիրական ամէնէն առողջ սկզբունքները։ Պիտի ունենայ տարբեր ճիւղերու վրայ դրող հմուտ աշխատակիցներ։

Տարեկան բաժնեգիրն է Ամերիկայի համար 1 տուար, օտար երկիրներու համար 7 ֆրանք, իսկ մէկ ծրարով երկու օրինակ միասին ստանալ յօժարողներու 6 ական ֆրանք։ Հասցէ՝ M. Minassian

95 Flagg st. Cambridge, Mass. U. S. A.